

ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունված է
19 մարտի 2012 թ.

Հոդված 1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-107 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հավելվածի 2-րդ կետում «(բացառությամբ ձեռագիր ստորագրելու ձևի և կնքելու պահանջների)» բառերը փոխարինել «(բացառությամբ ձեռագիր ստորագրելու ձևի պահանջի)» բառերով, ինչպես նաև «իսկ կնիք դնելը պարտադիր լինելու դեպքում՝ կնիքով ամրագրված» բառերը հանել:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հավելվածում՝

1) 6-րդ կետի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Թերթիկը ստորագրվում է հարկ վճարողի կողմից և ամրակցվում ներկայացվող հաշվետվություններին:».

2) 7-րդ կետի 4-րդ ենթակետից հանել «և (կամ) կնիքը» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Ս. Սարգսյան

2012 թ. ապրիլի 6
Երևան
ՀՕ-60-Ն